ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# ՀՐԱՄԱՆԸ

«22» հունիսի 2018 թվականի № 70-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն ՀՀ վարչական դատարանի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու, հայցադիմումը վարույթ ընդունելու և նախնական դատական նիստ նշանակելու մասին» 2018 թվականի մայիսի 15-ի որոշման, ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, համաձայն որի՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել «Հայկական նավթի և գազի ընկերություն» ՍՊԸ-ի նկատմամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի փետրվարի 20-ի № 20-Ա հրամանի գործողությունը՝ մինչև սույն գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

2. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի ընդերքի գործակալության պետի պաշտոնակատար Անուշավան Այվազյանին՝ սույն հրամանի մասին ծանուցել «Հայկական նավթի և գազի ընկերություն» ՍՊԸ-ին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարության աշխատակազմի ղեկավարին:

**ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ**